



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. info@styeoghiche.org.uk

www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

05th November 2017

Bulletin No 46/17

Eighth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍՍՅԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄՍԱԿԷՆ 1:1-14

Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Օրհնեա՛լ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով՝ երկնային վայրերու մէջ, ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, որպէսզի գովաբանենք իր շնորհքին փառքը. անո՛վ ընդունելի դարձուց մեզ՝ Սիրելիին միջոցով: Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. անո՛վ ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Քրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անո՛ր՝ որ կը ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, որպէսզի մենք՝ նախապէս Քրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: Դո՛ւք ալ ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Հոգիով, որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար:

The Epistle of St Paul to the Ephesians 1:1-14

The Blessings of Redemption

Paul, an apostle of Christ Jesus by the will of God,
To the saints who are at Ephesus and *who are* faithful in Christ
Jesus: Grace to you and peace from God our Father and the
Lord Jesus Christ.

Blessed *be* the God and Father of our Lord Jesus Christ, who has blessed us with every spiritual blessing in the heavenly *places* in Christ, just as He chose us in Him before the foundation of the world, that we would be holy and blameless before Him. In love He predestined us to adoption as sons through Jesus Christ to Himself, according to the kind intention of His will, to the praise of the glory of His grace, which He freely bestowed on us in the Beloved. In Him we have redemption through His blood, the forgiveness of our trespasses, according to the riches of His grace which He lavished on us.



2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

In all wisdom and insight He made known to us the mystery of His will, according to His kind intention which He purposed in Him with a view to an administration suitable to the fullness of the times, *that is*, the summing up of all things in Christ, things in the heavens and things on the earth. In Him also we have obtained an inheritance, having been predestined according to His purpose who works all things after the counsel of His will, to the end that we who were the first to hope in Christ would be to the praise of His glory. In Him, you also, after listening to the message of truth, the gospel of your salvation—having also believed, you were sealed in Him with the Holy Spirit of promise, who is given as a pledge of our inheritance, with a view to the redemption of *God's own* possession, to the praise of His glory.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:17-21

Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չգիտցուի ու երեւան չելլէ: Ուրեմն զգուշացէ՛ք թէ ի՛նչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի առնուի նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»:

Անոր մայրն ու եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար մօտենալ իրեն: Անոր լուր տուին՝ ըսելով. «Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայնած են եւ կուզեն տեսնել քեզ»: Ան ալ պատասխանեց անոնց. «Իմ մայրս ու եղբայրներս անո՛նք են, որ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 8:17-21

“For nothing is hidden that will not become evident, nor *anything* secret that will not be known and come to light. “So take care how you listen; for whoever has, to him *more* shall be given; and whoever does not have, even what he thinks he has shall be taken away from him.”

And His mother and brothers came to Him, and they were unable to get to Him because of the crowd. *And it was reported to Him, “Your mother and Your brothers are standing outside, wishing to see You.”* But He answered and said to them, “My mother and My brothers are these who hear the word of God and do it.”

Եթե փոքրիկը մեծանում է եկեղեցու մեջ, դա ամենամեծ երջանկությունն ու ուրախությունն է

Յուրաքանչյուր ծնողի նվիրական նպատակն իր երեխային առաքինի, ազնիվ, բարի ու խելացի մարդ դարձնելն է: Իսկ ո՞րն է այս ամենին հասնելու ճանապարհը:

«Մտղներ կան՝ երեխայի դաստիարակության մեջ չափազանց կարևորում են փողի դերը, ցանկանում են, որ նա փողի մեջ մեծանա, և արդեն ենթադրելի է, թե նա ինչ տեսակ զավակ պիտի լինի, և ծնողը վաղ թե ուշ կրելու է իր զավակի պտուղը. նա տառապանք է կրելու, քանի որ իր երեխան չի կարող պիտանի մարդ լինել», - կարծում է Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր սպասավոր Տեր Դանիել քահանա Բաղումյանը: Ըստ մանկավարժ-դաստիարակ Ալիսա Սաղաթելյանի՝ երեխայի մեջ համամարդկային արժեքներ սերմանելու հարցում մեծ դեր ունեն հոգևոր դաստիարակությունը, եկեղեցին:

Նախ՝ պարզենք, թե ինչ է կատարվում փոքրիկի ներաշխարհում: Երեխայի մոտ գիտակցության նշույլները սկսում են զարգանալ ծնված օրվանից: 2,5-ից 3 տարեկանում նա կարողանում է տարբերակել ես-ը ոչ ես-ից, իրեն առանձնացնել շրջապատից: «Նա առաջին անգամ հարց է տալիս՝ ես որտեղից եմ ծնվել, և չգիտես ինչու խաբում են իրեն, մինչդեռ պետք է փոքրիկին՝ իր հասկացողությանը համապատասխան ձևով, ճիշտ մատուցել, վերջիվերջո, նա մեծանալու է և առնչվելու այդ հարցին», - ասում է «Այգ» հոգեբանական ծառայությունների հոգեբան-հոգեթերապևտ Մարինե Ավետիսյանը:

Փոքրիկի միջավայրում կան կառույցներ, որոնք իրենց հետքն են թողնում նրա հոգեբանության վրա: Տարբեր երեխաների մոտ տարբեր են ընկալումները՝ կախված տարիքային առանձնահատկություններից, ընտանիքից, միջավայրից, իրենց ներքին հոգեկան կառուցվածքից: Եկեղեցին միջավայրի կառույցներից մեկն է, որ նույնպես իր ազդեցությունն է թողնում երեխայի վրա:



3: List of the Feasts celebrated in the Armenian church

Այստեղ հանգում ենք Աստծուն՝ փոքրիկին ճիշտ ներկայացնելու խնդրին: Մարինե Ավետիսյանը նշում է, որ սխալ է այն մոտեցումը, երբ պապիկի դերում են ներկայացնում Աստծուն: «Պետք է այնպես բացատրել, որպեսզի հետագայում երեխան ծուղակը չընկնի: Եթե հենց փոքր տարիքից ճիշտ մատուցվեն Աստծո, հավատի վերաբերյալ մոտեցումները, և երեխան, երբ իր զարգացման ընթացքում հասնի այն տարիքին, որ պետք է իր մեջ ընտրություն կատարի՝ հավատալ-չհավատալ, արդեն պատրաստ կլինի որոշելու՝ որն է իր համար ընկալելին և ճիշտը», - ասում է հոգեբանը: Նա խորհուրդ է տալիս Աստծուն ներկայացնել որպես սիրո, բարության, ներման մարմնացում, հոգևոր հենման կետ:

Իսկ ի՞նչ է եկեղեցին տալիս երեխային: Նախ՝ չկա որոշակի տարիք՝ փոքրիկին եկեղեցի տանելու համար: «Կան երեխաներ, որ նոր են դպրոց հաճախում, բայց գալիս են եկեղեցի, լսում են Պատարագը, երգում: Եթե երեխան արդեն իսկ իր բերանով թոթովում է հայոց այբուբենը, մեկտեղ պիտի իմանա նաև «Տերունական աղոթք»-ը: Եթե երեխան եկեղեցու մեջ մեծանա, մենք կունենանք աստվածավախ անձնավորություններ, որոնք նվիրված կլինեն իրենց հայրենիքին, եկեղեցուն, իրենց ընտանիքին: Երեխան որքան մոտ լինի Աստծուն, այնքան մենք դրանից միմիայն կշահենք: Երբ փոքրիկը մեծանում է եկեղեցու մեջ, դա ամենամեծ երջանկությունն ու ուրախությունն է: Եվ եթե այսօր ասում ենք, որ ուզում ենք ունենալ լավ քաղաքացի, նաև պետք է ունենանք ճշմարիտ, բարեպաշտ հավատացյալ, իսկ մենք դրան հասնում ենք եկեղեցու կամարների ներսում», - ասում է տեր Դանիելը:

«Երբ մեր երեխաները դպրոց չեն գնում, փոքր են, «Տեր ողորմես»-ն երգելիս հավատքով հասկանում են: Փոքրուց պետք է երեխային եկեղեցի տանել, դա օրհնություն է: Պարտադիր չէ, որ բալիկը հասկանա՝ ուր է եկել: Շատ փոքրիկներ կան, որ մանկապարտեզի հասակի են, բայց երբ ծնողի հետ գալիս են, մոտ են ցանկանում վառել, անկախ իրենցից, նրանց մեջ արդեն ձևավորվում է մարդը, հավատացյալը», - ասում է տեր Դանիելը: Իսկ երբ երեխան դպրոց է հաճախում, նա արդեն սկսում է շատ բան գիտակցել, սովորել, իմաստնանալ: Պատահական չէ, որ երբ լսում ես եկեղեցու փոքրիկներին, նրանց մաքուր, անարատ ձայնի թոթովանքը, տեղափոխվում ես այլ՝ մաքուր ու վերերկրային մի աշխարհ: Եթե մարդն Աստծուն մոտ լինի, Աստծո ներկայության մեջ և Աստված իրենց ընտանիքի մեջ, դա ամենասօրհնաբեր, պտղաբեր ընտանիքը կլինի: Քահանայի վկայությամբ՝ եթե փոքրիկ աղջնակը գալիս է եկեղեցի, ինչպես Աստվածամայրը երեք տարեկանում ընծայվեց տաճարին, նա հետագայում լավ մայր կլինի, ընտանիք կունենա, լավ երեխաներ կդաստիարակի: Բնավ պարտադիր չէ շարունակել ուսումը հոգևոր ուղղությամբ. մարդուն՝ որպես ճշմարիտ քրիստոնյայի, անհրաժեշտ է Աստծո տան, Աստծո ներկայության մեջ մեծանալը:

Տեր Դանիելը խորհուրդ է տալիս բոլոր ծնողներին՝ երեխաներին եկեղեցի բերել, «քանի որ իրենք լավ մարդիկ կմեծանան: Եթե մարդը ճանաչում է Աստծուն, սիրում, Տիրոջն ունի իր հոգու մեջ, կատարողն է Աստծո խոսքի, չի կարող վատ մարդ լինել: Հավատացեք, որ նրանք լավագույն քաղաքացիները կմեծանան՝ նվիրված ծնողներին, ընտանիքին ու հայրենիքին»:

Աղբյուր՝ «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ, 2011 թ., Հունիս Ա, Թիվ 11 հեղինակ՝ Մարիամ Ավետիսյան

Տոն բոլոր սրբերի՝ հների և նորերի, հայտնիների և անհայտների

Հայ Եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սուրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

Քրիստոնեական հալածանքների և հավատի համար մղված բազում պատերազմների ժամանակ շատերն են նահատակվել, որոնց անունները, ցավոք, չեն պահպանվել և հասել մեզ: Ուստի, եկեղեցին հաստատել է այս նվիրական տոնը հենց նրանց հիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արյունը հեղեցին հանուն Քրիստոսի և նրա խորհրդավոր մարմնի՝ եկեղեցու շինության:

4: Հոգեհախճիւն - Memorial Service

Feast of All Saints - the old and the new, the known and the unknown

By this feast the Armenian Apostolic Church commemorates the memory of all those saints, whose names are not included in the Church Calendar, but whose names are registered in the sacred book of the Heavenly Kingdom.

Many people have been subjected to severe torments and have been martyred during the wars for the sake of faith. Unfortunately, we do not know their names. So the Church has established this feast in the Church Calendar in order to commemorate their memory. They are persons who shed their blood for the sake of Christ and His Church.

There is no Memorial Service this week at St Yeghiche Armenian Church

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

ՈՂՋՈՅՆ Ս ՊՍՏԱՐԱԳԻ – KISS OF PEACE

ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔ ՄԻՄԵԱՆՑ, *Voghchooyn dook mimiantz*, Give greetings to one another,

ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ, *Kristos ee metch mer haidnetzav*,

Christ is revealed among us,

ՕՐՀՆԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, *Orhnial eh haidnootiunn kristosi*,

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £to the St Yeghiche Arm. Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....